



## «Նոր ժանանակի կրթություն» ՀԿ

### ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ»

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Ալինա Սահակյան

Ուսումնական հաստատություն՝ «Ք. Մասիսի Վահրամ Բաբայանի  
անվան թիվ 2 հիմն. դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| Ներածություն .....   | 3  |
| Ընտանիքի նկարագիրը .....   | 6  |
| Կոնֆլիկտ .....   | 7  |
| Ընտանեկան կոնֆլիկտներ .....  | 9  |
| Ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման միջոցներ .....  | 14 |
| Կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա :Երեխաների ներգրավվածությունը ընտանեկան կոնֆլիկտներում ..... | 17 |
| Ընտանեկան կոնֆլիկտների հետևանքով առաջացած հոգետրավմաների հաղթահարման ուղիներ .....                                 | 21 |
| Եզրակացություն .....   | 26 |
| Օգտագործված գրականության ցանկ .....  | 29 |

## Ներածություն

Աշխատանքում ներկայացվում է ընտանեկան կոնֆլիկտները, դրանց առաջացման պատճառները, կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների զարգացման, աշխարհայացքի ձևավորման, հասարակական միջավայրում վարքի դրսևորումների փոփոխության և խնդիրների հարթահարման կարողության վրա, առաջարկվում է ընտանեկան կոնֆլիկտներին կարգավորմանն ու կայուն զարգացման ապահովմանն առնչվող հնարավոր լուծումներ:

Բույր ընտանիքներում էլ ժամանակ առ ժամանակ լինում են կոնֆլիկտներ (տարածայնություններ): Ընտանեկան տարածայնությունները հնարավորություն են ստեղծում թուլացնել լարված մթնոլորտը, հասկանալ մեր կողմից ապրող մարդկանց տեսակետներն ու համոզմունքները:

Զգուշավոր պետք է լինեն այն ընտանիքները, որտեղ կան երեխաներ, ովքեր նոր են ծանոթանում կյանքի բազմաթիվ դրսևորումներին և դեռևս մեծ կախվածության մեջ են գտնվում ընտանիքի առավել փորձառու անդամներից: Նրանց հոգևոր և ֆիզիկական ճիշտ զարգացումն ու կայունությունը պետք է գերակա նպատակ լինի ընտանիքի բոլոր անդամների համար և ուղեկցող հատկապես ծնողների հարաբերությունները կարգավորելու գործընթացում:

Ընտանիքի տնտեսական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած լարվածությունը հանգեցրել է ընտանիքում կոնֆլիկտների աճին, մարդու սթրեսային դիմադրության նվազմանը, բացասական հույզերի կուտակմանը, հաճախ էլք գտնելով ուրիշների նկատմամբ ագրեսիայի մեջ: Ընտանեկան հարաբերությունները դառնում են ֆաղափակիրք հասարակության զարգացման և գոյության առաջատար գործոն:

Գիտնականների մեծ մասը կարծում է, որ առանց կոնֆլիկտի ընտանիքի գոյությունն անհնար է: Սա ընտանեկան կյանքի անհրաժեշտ տարր է, որը հնարավորություն է տալիս թոթափել լարվածությունը: Կոնֆլիկտների խնդիրը միշտ էլ արդիական է եղել ցանկացած հասարակության համար: Կյանքն ապացուցում է, որ կոնֆլիկտը այն երևույթներից չէ, որոնք կարելի է արդյունավետ կառավարել կյանքի փորձի և ողջախոհության հիման վրա:

Ընտանիքը մեծ ազդեցություն ունի երեխայի անհատականության ձևավորման վրա: Ընտանիքն է, որ որոշում է

մեծահասակների և երեխաների հետ երեխայի հարաբերությունների փորձը մեծապես որոշում է նրա հետագա կյանքի բնույթը:

Ավանդաբար ընտանիքը կրթության հիմնական հաստատությունն է: Այն, ինչ մարդը ձեռք է բերում ընտանիքում, պահպանում է իր հետագա կյանքում: Ընտանիքի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ մարդն իր կյանքի մի զգալի մասը մնում է դրանում: Ընտանիքում դրվում են անհատականության հիմքերը:

Երեխայի անհատականության դեֆորմացիան, նրա հոգեբանական անկայունությունը սկսվում է վաղ մանկությունից՝ ընտանիքի ազդեցության տակ: Հենց այս փուլում է անբարենպաստ, երբեմն պատահական, երբեմն աննշան թվացող գործոնների ազդեցության տակ առաջանում վերաբերմունք, որը վնասակար է հետագա զարգացման համար: Ընտանեկան կրթությունը հիմնված է սիրո և փոխադարձ հարգանքի զգացումների վրա: Եթե ընտանիքում չկա զգացմունքների ներդաշնակություն, եթե բարոյական մթնոլորտ չի ստեղծվում, եթե մեծահասակները հակված են մշտական կոնֆլիկտների, ապա անձի զարգացումը բարդանում է, ընտանեկան կրթությունը, իհարկե, դրականից դառնում է բացասական գործոն:

Անկախ նրանից՝ կոնֆլիկտային ընտանիքը աղմկոտ է, սկանդալային, որտեղ բզովոցները, դժուրագրգռությունը դառնում են ամուսինների հարաբերությունների նորմա, թե հանգիստ, որտեղ ամուսնական հարաբերությունները նշանավորվում են լիակատար օտարումով, ցանկացած փոխազդեցությունից խուսափելու ցանկությամբ, դա բացասաբար է անդրադառնում երեխայի ձևավորման վրա և կարող է առաջացնել շեղված վարքի տարբեր սոցիալական դրսևորումներ:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ընտանեկան կոնֆլիկտներն ամենատարածված են, և դրանք բացասաբար են ազդում մշտական կոնֆլիկտային մթնոլորտում ապրող երեխայի վրա:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների հոգեբանական զարգացման վրա, գտնել ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման միջոցներ: Ուսումնասիրության նպատակին համապատասխան սահմանվել են հետևյալ խնդիրները.

- ⊙ ուսումնասիրել այս թեմային վերաբերող գրականությունը,
- ⊙ դիտարկել ընտանեկան կոնֆլիկտների առանձնահատկությունները և դրանց տիպաբանությունը,

- ⊙ ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի անհատականության ձևավորման վրա,
- ⊙ նկարագրել կոնֆլիկտային ընտանիքների երեխաների հոգեբանական առանձնահատկությունները,
- ⊙ ընտանեկան կոնֆլիկտների լուծման համար սոցիալական և կանխարգելիչ աշխատանքի մոդելների ուսումնասիրություն:

## Հնտանիքի նկարագիրը

Հնտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված՝ մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Հնտանիք տերմինը ներառում է մի խումբ մարդկանց, որոնք բաղկացած են որպիսի կապերով միավորված մարդկանցից: Այս համակարգը հասկացվում է որպես բաց անբողջություն, որում բոլոր բաղադրիչները սերտորեն կապված են միմյանց հետ:

Հնտանիքը միայն ամուսնական, ազգակցական կապերով, ընդհանուր հոգևոր և նյութական շահերով կապված անձանց միությունն է: Հնտանիքը հասարակության մի մասնիկն է:

Հնտանիքը որպես հասարակական կարևորագույն սոցիալական ինստիտուտ տարբերվում է սովորական սոցիալական խմբերից: Հնտանիքում գոյություն ունեն հոր, մոր և զավակների կարգավիճակներ, դերեր, իրավունքներ ու պարտականություններ: Հնտանիքի կայացման համար մեծ նշանակություն ունի երիտասարդ սերնդի նախապատրաստումը ամուսնական կյանքին: Ամուսնության ամրության և ընտանիքի արդյունավետ գործառնան ընթացքում անհատական պահանջմունքների դերի կարևորությունը ստիպում է ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում մտապես ուշադրության կենտրոնում պահել ընտանիքի անդամների պահանջմունքների խնդիրը: Շատ դեպքերում, խնդրի արդյունավետ լուծման համար ամուսնական կամ ընտանեկան պահանջմունքները դասակարգվում են:<sup>1</sup>

Հնտանիքը հանդես է գալիս որպես անհատի զարգացման կարևորագույն գործոն: Այստեղ երեխան ծնվում է այստեղ նա ստանում է նախնական գիտելիքներ աշխարհի մասին և առաջին կենսափորձը: Հենց ընտանիքը, ընտանեկան կրթությունն է հիմնական դերը խաղում երեխայի զարգացման մեջ՝ թե՛ նախադպրոցական, թե՛ դպրոցական տարիքում: Երեխային պետք է դաստիարակեն ծնողները, իսկ սոցիալական հաստատությունները (մանկապարտեզներ, դպրոցներ) կարող են օգնել նրանց միայն երեխայի ինքնազարգացման համար պայմաններ ապահովելու հարցում՝ օգնելով նրան հանաչելու իր անհատական հակումները: Հնտանիքը կոլեկտիվի առանձնահատուկ տեսակ է, որը հիմնական, երկարաժամկետ և կարևոր դեր է խաղում կրթության մեջ: Հնտանիքում է երեխան ստանում առաջին կենսափորձը, առաջին

դիտարկումներն է անում, թե ինչպես պահի իրեն տարբեր իրավիճակներում: Շատ կարևոր է, որ այն, ինչ մենք սովորեցնում ենք երեխային, հիմնավորված լինի կոնկրետ օրինակներով, որպեսզի նա տեսնի, որ մեծահասակների մոտ տեսությունը չի շեղվում պրակտիկայից:<sup>2</sup>

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոց է ընտանիքի անդամների խոսքը: Ընտանիքում թե՛ կրտսեր, թե՛ ավագ անդամները հաղորդում են իրենց սպավորությունները տեսածի և լսածի վերաբերյալ, պատմում իրենց աշխատանքային գործունեության և շրջապատի կյանքի կարևոր դեպքերի մասին : Խոսքի օգնությամբ ֆննարկվում են բազմազան հարցեր, ծնողները երեխաներին տալիս են խորհուրդ, բացատրություն:<sup>1</sup>

Այս սերտ ու ինտիմ հարաբերությունների շնորհիվ նրանցից յուրաքանչյուրի պահվածքը կարող է ազդել ընտանիքի դինամիկայի վրա: Ինչպես բնական է, ընտանեկան վեճերն ու կոնֆլիկտներն այդ դինամիկայի մի մասն են: Այնուամենայնիվ, կան ընտանեկան կոնֆլիկտի տարբեր տեսակներ. ըստ մարդկանց միջև կապի տեսակի կամ ըստ այդմ ծագող պատճառի:

### **Կոնֆլիկտ**

Կոնֆլիկտները մարդկային հարաբերությունների մեջ բացասական էմոցիաներ առաջացնող անենահաճախ հանդիպող երևույթներն են, որովհետև մարդիկ սոցիալական էակներ են և հետաքրքրված են սոցիումում սեփական անձի ընկալման ասպեկտներով: Տարբերում ենք երկու տեսակի կոնֆլիկտներ՝ ներանձնային և միջանձնային: Ներանձնային կոնֆլիկտները ներքին տարբեր մղումների միջև բախումներն են՝ տեսակետների և ցանկությունների, բարոյական ընկալումների և պահանջմունքների, հնարավորությունների և կարողությունների: Ներքին կոնֆլիկտները կարող են գիտակցվել և չգիտակցվել: Միջանձնային կոնֆլիկտներն ավելի հեշտ են լուծելիության տեսանկյունից, սակայն ավելի շատ լարվածության առիթներ են ստեղծում: Ներքին կոնֆլիկտները հարթելը ավելի հաճախ մասնագիտական միջամտություն են պահանջում, քանի որ այս կոնֆլիկտները հաճախ գիտակցված չեն:<sup>3</sup>

Կոնֆլիկտների հիմնական կառուցվածքային տարրերը հետևյալն են՝

- 1. Կոնֆլիկտի օբյեկտը** այն սոցիալական երևույթն է, որի պատճառով առաջացել է տվյալ կոնֆլիկտային իրավիճակը: Այդ երևույթը կառավարելու, իշխելու իրավունքը ձեռք բերելու պայքարը բերում է

կոնֆլիկտների: Կոնֆլիկտի օբյեկտը բնութագրվում է նրանով, որ այն կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ հոգեբանական:

**2. Կոնֆլիկտի մասնակիցները** առանձին անձինք են, մարդկանց խմբեր, կազմակերպություններ, պետություններ: Կոնֆլիկտի մասնակիցները իրականացնում են միմյանց դեմ ակտիվ կամ պասիվ գործողություններ: Կոնֆլիկտի օբյեկտի և մասնակիցների առկայությունը առաջացնում է կոնֆլիկտային իրավիճակ: Կոնֆլիկտային իրավիճակ կարող է գոյություն ունենալ, սակայն կոնֆլիկտ կարող է և չլինել:

**3. Միջադեպը** կոնֆլիկտի մասնակիցների կողմից իրականացվող գործողություն է, որի նպատակն է տիրել օբյեկտին և ոտնահարել նրա շահերը:

Այսպիսով կոնֆլիկտային իրավիճակին գումարած միջադեպ հավասար է կոնֆլիկտ:

Կոնֆլիկտի պատճառ են այն երևույթները, իրադարձությունները, փաստերը, որոնք նախորդում են կոնֆլիկտին և սուբյեկտների գործունեության որոշակի պայմաններում առաջանում են կոնֆլիկտներ: Կոնֆլիկտների առաջացման պատճառները բաժանվում են երկու խմբի՝ **մասնավոր** և **ընդհանուր**:

**Ընդհանուր պատճառներն են՝**

1. **սոցիալ- ֆազաական և տնտեսական** պատճառները կապված երկրում առկա իրավիճակի հետ,
2. **սոցիալ- ժողովրդագրական** պատճառները արտացոլում են մարդկանց տարբերությունները պայմանավորված նրանց սեռով, տարիքով, էթնիկ խմբի պատկանելությամբ և այլն,
3. **սոցիալ- հոգեբանական** պատճառներ, որոնք ներառում են խմբում փոխհարաբերությունները, լիդերությունը, կոլեկտիվի կարծիքը և այլն,
4. **անհատական-հոգեբանական** պատճառներ, որոնք արտացոլում են անձի անհատական հատկությունները, ընդունակությունները, խառնվածքը, բնավորությունը և այլն:

**Մասնավոր պատճառներն են՝**

1. գործունեության պայմաններով անբավարարվածությունը,
2. պաշտոնական էթիկայի խախտումը,
3. աշխատանքային օրենսդրության խախտումը,
4. ռեսուրսների սահմանափակությունը,



5. նպատակներում տարբերությունները,

6. անբավարար հաղորդակցումը:<sup>4</sup>

### **Ընտանեկան կոնֆլիկտներ**

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, եթե չկան վեճեր նշանակում է ընտանիքում տիրում է սառը պաշտոնական հարաբերություններ:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են ֆրեաժին, կոնֆլիկտաժին, անբարենպաստ ընտանիքներ:

Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահուելի ու ավելի կետերի տարածք: Այս դեպքում մարդը կորցնում է ինֆնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը:

Մարդն աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմանի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմանները:

Հանախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, փայփայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում լարվածություն, սրբես, տհաճ հոգեվիճակներ:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներգաճակ ձևավորման վրա: Գոյություն ունի կոնֆլիկտ հասկացության մի ֆանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուբ հուզական ապրումների հետ»:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է:

Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա.Մ.Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. «Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով»: Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, բաղաձայնության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների 4 տեսակ.

- 1. Ներանձնային-** պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:
- 2. Միջանձնային-կոնֆլիկտը** ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

**3. Անհատական-խմբային կոնֆլիկտը** առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

**4. Միջխմբային կոնֆլիկտ-** այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև: Կոնֆլիկտային գործունեության հիմքում ընկած են՝

ա) գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք)

բ) ակտիվության կոնֆլիկտները (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը)

գ) նեֆին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում): Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անըդիստ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով:

Ընտանիքի յուրահասկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենաերստ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նման ինտեսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների, և հզնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով, ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ: Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին, դրամի, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև: Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի:

Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վերջին կայացնելու: Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1. սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում,
2. դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, ֆեֆեանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն,
3. ցածր կրթամակարդակ

4. աշխատանքի բացակայությունը և ֆինանսական դժվարություններ

5. կախվածություն ծնողների ընտանիքներից:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են գույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խոսնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խոսնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ գույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը:

Ֆիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում:

Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանց: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ գույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ, որպեսզի սեռական կյանքում լինի ներդաշնակություն:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լսի ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաբարված է ընտանիքի անդամները, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

Օ նկրտիկ ընտանիքներ, որտեղ գույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, բնի խանգարում, ագրեսիվություն,

○ նգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թեմամբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,

○ պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են ֆրեաժին, կոնֆլիկտաժին, ամբարենպաստ ընտանիքներ:

Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք:

Այս դեպքում մարդը կորցնում է ինֆնատիբապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը:

Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավարության սրելից պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները:<sup>4</sup>

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել պատկերացումների 3 համակարգ՝

- 1. **էզոցենտրիկ համակարգ** - սրի հիմքում ընկած է սեփական Ես-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես կամ օգտակար գործիք կամ խոչընդոտ:
- 2. **Այլէտոքենտրիկ համակարգ** - կենտրոնում ընկած է ուրիշը:
- 3. **Սոցիոգենտրիկ** - հիմքում ընկած է Ընտանիքի համար նգնաժամային շրջաններն են՝

1. **Միմյանց հարմարվելու փուլ**՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձեվավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:

2. **Երեխա ունենալու փուլ**՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական ահի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:

**3. Բախման փուլ՝** երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:

**4. Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝** այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ, կամ ֆաղցի շրջան:

**5. Իվոլուցիոն, կամ միայնակության զգացման փուլ:** Այս շրջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլուցիոն շրջանի հետ: Կարող է ձեւավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարածայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պտրկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախակիացումը կարող է լրջորեն խթարել ընտանիքի ամրությունը: Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:<sup>5</sup>

### **Ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման միջոցներ**

Ընտանեկան կոնֆլիկտների կանխարգելումը և լուծումը կախված է դրանց նկատմամբ վերաբերմունքից: Առաջին հերթին պետք է սովորել, թե ինչպես ճիշտ վարվել վեճի ժամանակ.

- **Սահմանել խնդիրը:** Հստակ և հանգիստ ֆննարկել այն ընտանիքի հետ՝ ուշադրություն դարձնելով տոնայնությանը և զգացմունքները արտահայտելու համար ընտրած բառերին:
- **Քննարկել** հայտնաբերված խնդիրը:
- Եթե ֆննարկումը թեժանում է և սկսում է վերածվել կռվի, պետք է ընդմիջել, որպեսզի բոլորը կարողանան հանգստանալ և վերադառնալ հանգիստ ֆննարկման:

- **Գտնել** խնդրի լուծում և կոլեկտիվ պայմանավորվել դրա շուրջ.
- **Կիրառել** որոշումը գործնականում: Պետք է գործել որոշման համաձայն, որպեսզի կոնֆլիկտն իսկապես լուծվի:<sup>6</sup>

Կոնֆլիկտների լուծման համար շատ կարևոր է վերլուծել դիմացի մարդու կամ առհասարակ մարդկանց վարքի պատճառները: Սովորաբար կոնֆլիկտի վիճակում գտնվող մարդիկ կարծում են, որ կոնֆլիկտի մյուս կողմում գտնվող մարդը ցանկանում է իրենց վնասել: Սակայն մեծ հաշվով մարդիկ վարվում են այս կամ այն կերպ միայն իրենց ներքին մղումներից և իրենց սեփական խնդիրները լուծելու համար: Այսինքն՝ իրենց վարքը հիմնականում պայմանավորված է իրենց վախերով, անհանգստություններով, անլիարժեքության զգացմամբ և այլն: Կոնֆլիկտային իրավիճակներում շատ օգտակար է ռեալացնել սեփական ակնկալիքները: Երբ մենք զգալիորեն պակասեցնում ենք մեր ակնկալիքները, բնականաբար կոնֆլիկտի առիթը նույնպես նվազում է: Շատ կարևոր է վերլուծել մեր ակնկալիքների իրատեսականությունը: Կոնֆլիկտները լուծելուն շատ է օգնում այն գաղափարը, որ հեմարտությունը տարբեր է: Այս իրավիճակին համապատասխան մի ասույթ կա. «Այս աշխարհում երեք հեմարտություն կա՝ իմ հեմարտությունը, քո հեմարտությունը և հեմարտությունը»: Այս գիտակցումն օգնում է կոնֆլիկտային իրավիճակներում լինել ավելի հանդուրժող և հկուն:<sup>3</sup>

Կոնֆլիկտների լուծումը մասնակիցների համար անձնական նշանակություն ունեցող խնդրի՝ փոխադարձ ընդունելի լուծում գտնելու գործընթաց է: Խնդրի լուծումը կարող է լինել **լիարժեք** կամ **թերի**: Լիարժեք լուծումը սեղի է ունենում, երբ վերացվում են պատճառները, կոնֆլիկտի թեման և կոնֆլիկտային իրավիճակը: Անավարտ լուծում.

երբ կոնֆլիկտի կամ կոնֆլիկտային իրավիճակների ոչ բոլոր պատճառներն են վերացվում: Նման դեպքում թերի լուծումը կարող է ֆայլ լինել դեպի լիարժեք լուծում:

Ամուսնական կոնֆլիկտների լուծման տեխնոլոգիան շատ բազմազան է, այն ներառում է մի քանի փոխկապակցված գործողություններ, որոնք միասին կազմում են վարքի որոշակի չափանիշներ, որոնք թույլ են տալիս խուսափել կոնֆլիկտներից և հմտորեն լուծել վերջիններս, երբ դրանք առաջանան :

Ամուսնական, ինչպես նաև միջանձնային ցանկացած կոնֆլիկտների կանխարգելման հուսալի միջոցներից մեկը մարդկանց հետ հարաբերություններում **«սոցիալական հեռավորության»** սկզբունքները պահպանելու մարդու կարողությունն է: Սոցիալական հեռավորությունը արտահայտում է սոցիալ-հոգեբանական համատեղելիության

աստիճանը, մարդկանց մոտ լինելը կամ հեռավորությունը, ինչը նպաստում է նրանց փոխգործակցության հեշտությանը և դժվարությանը, և որը, ճիշտ ընտրելու և պահպանելու դեպքում, կարող են կանխել կոնֆլիկտները, որոնք կարող են բռնկվել, երբ մարդիկ շատ մոտ են միմյանց, բայց կարող են առաջանալ և այն դեպքերում, երբ նրանք շատ հեռու են միմյանցից: Հետևաբար, ամուսնու հետ հարաբերություններում պետք է ձգտել այնպես հասնել նրան, որ հոգեբանական մերձեցման սահմանը երբեք չհասնի, որպեսզի մնա շարժման հնարավորությունը, մնա մի ստրածություն, որտեղ դեռ կարելի է մոտենալ միմյանց:

Երիտասարդ ընտանիքներում ամուսնական կոնֆլիկտների կանխարգելման երկրորդ՝ ոչ պակաս կարևոր մեթոդը **«բազմազանության կանոնին»** հետևելն է: Որքան մեծ է ամուսինների փոխադարձ հետաքրքրությունը, այնքան բազմազան են նրանց շահերը և որքան մեծ է այդ շահերի համընկնումը, այնքան մեծ է համագործակցության ուեսուրը, այնքան քիչ են կոնֆլիկտների առեակատման հնարավորությունները: Եթե ամուսիններին կապող շահերը շատ նեղ են և սահմանափակ (օրինակ՝ միայն սեռական կամ միայն ֆինանսական), ապա այդ մարդկանց միջև հնարավոր կոնֆլիկտների հիմքը գգալիորեն ընդլայնվում է:

Ամուսնական կոնֆլիկտների կանխարգելման գործում կարևոր կառուցողական դեր կարող է խաղալ բացառված **սոցիալական դրսևորման** մեթոդը: Կոնֆլիկտներ հաճախ առաջանում են այն պատճառով, որ ամուսնական գույգերից մեկն իր ուղջ ուժով ձգտում է ցույց տալ իր արժանիքները, հաջողությունը, խելքը, ուժը և այլն՝ դրանով իսկ առաջացնելով մյուսի գրգռվածությունն ու ագրեսիվությունը՝ մղելով նրան կոնֆլիկտային հակադդեցության: Որքան հաճախ և ավելի ակտիվորեն ամուսինները բացառում են սոցիալական դրսևորումները, այնքան ավելի քիչ են կոնֆլիկտների պատճառները : Կոնֆլիկտները կարող են լուծվել փոխզիջումների, համագործակցության և արտաքին ազդեցության միջոցով : Ամուսնական կոնֆլիկտների լուծման կառուցողականությունը, կախված է առաջին հերթին ամուսինների՝ հասկանալու, ներելու և գիջելու կարողությունից:

Ամուսնական կոնֆլիկտների լուծման ուղիներից մեկը հոգեբանական խորհրդատվությունն է: Կոնֆլիկտային ընտանիքների համար հոգեբանական խորհրդատվության էությունը կայանում է նրանում, որ առաջարկություններ մշակել բացասական հոգեբանական գործոնները փոխելու համար, որոնք դժվարացնում են ամուսինների կյանքը և առաջացնում կոնֆլիկտներ:<sup>9</sup>



**Կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա :**

**Երեխաների ներգրավվածությունը ընտանեկան կոնֆլիկտներում**

Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վնասում ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա: Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինֆրագիտակցությունը, ինֆրագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված, ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Ընտանիքն ամուսն է այն ժամանակ, երբ գույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ բնարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է: Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խարարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն:

Դրանք են՝

**Օ ներքոտիկ ընտանիքներ**, որտեղ գույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, բնի խանգարում, ագրեսիվություն,

**Օ նգնաժամային ընտանիքներ**, որտեղ ամուսինները թեմամբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաճվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,

**Օ պրոբլեմային ընտանիքներ**, որտեղ առկա խնդիրներ, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում: Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես անուսնական գույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանցիլացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ակնհայտ է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեամառիկ և այլ հիվանդություններ: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ: Կոնֆլիկտներ կարող են առկա լինել **ծնող-երեխա** հարաբերություններում: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է հզոր ճանաչումով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Զգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեխ տարեկանում և դեռահասության տարիքում: Երեխ տարեկանի հզոր ճանաչումի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջումների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են հնչել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեխ տարեկանի հզոր ճանաչումն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ:

Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է հզորաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում « հայրեր և որդիներ» խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել «իդեալական ծնողի» իր պատկերացումներն իրական ծնողների հետ և սեռնում է, որ հսկայական տարբերություն կա «իդեալական» և «իրական» ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բուռնից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բուռն դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են ևս լարջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բուռնության դրսևորումների: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անքերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդությամբ լարված: Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, ֆարով հարվածել բակի կատուներին և շների: Գերադասում է խաղալ «ագրեսիվ» խաղալիքներով՝ զենք, ատրճառակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդկանց նկատմամբ: Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում հնձել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ,

ինճնանվիտի, կաճկանդվաճ, չճվիտոյ: Նրանճ ինճնավստահ և նախաճեռնոյ չեն, չեն կարողանում ինճնուրոյն որոճումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանճն ու աճխատանճը:

**Կոնփլիկտ երեխա-երեխա** հարաբերություններում: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնփլիկտի պատճանները մի փանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուճադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ճնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժվաճ, անտեսվաճ լինելու ճգացողություն, ինչն էլ կարող է վերաճվել ասելության ինչպես ճնողի, այնպես էլ փոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ճնվելուց հետո ճնողներն առավել ուճադիր պեսփ է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ճևավորեն դրական վերաբերմունճ նորաճնի նկատմամբ: Միայն ճնողից է կախվաճ երեխա-երեխա հարաբերությունների փնությը: Երեխա-երեխա հարաբերություններում կոնփլիկտի առաջացման երկրորդ պատճառը ճնողի կողմից երեխաների միջև սեռային խտություն դնելն է: Հայկական ընտանիքներում Տնորմալ՝ է սղա-աղջիկ երեխաներին փաճանել ճնողների միջև: Մայրերը սովորափար սիրում են սղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունճ են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիփից հասկանում և ճգում է ճնողի վերաբերմունճն ու սկսում է հակակրանճ ճգալ եղբոր կամ փոջ նկատմամբ: Կոնփլիկտ ընտանիքի այլ անդամների հետ: Եթե համենատենճ ընդլայնվաճ և փջջային ընտանիքները, ապա կտեսնենճ, որ ընդլայնվաճ ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնփլիկտներ, որոնճ ուղղակի չեն կարող առաջանալ փջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունվաճ ավանդույթ է, երբ սղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, փացի ճնողներից, ապրում են նաև եղբայրները, փույրերը և այլ հարազատներ: Որճան փազմանդան է ընտանիքը, այնճան դժվար է ապահովել փարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնվաճ ընտանիքներում կոնփլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնփլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, փինանսական խնդիրները, կրթվաճության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինճնահաստատվելու ճգումը, երեխայի դաստիարակության հետ կապվաճ տարբեր մտեցումները, փնավորության և խտնվաճփի անհամատեղելիությունը և այլն: Կոնփլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական փարեկեցության, ճառանգության հարցը: Առաջին հայացփից թվում է, թե այս տեսակի

կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չսփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինֆնամփոփ, ընկեցված ու անտարբեր: Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է «ծանր» բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինֆնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական գույգ պետք է սրբափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:<sup>7</sup>

Ընտանեկան կոնֆլիկտները երեխաների համար կարող են դառնալ հոգետրավմաների առաջացման պատճառ: Հոգետրավմաների հաղթահարման գործում մեծ դեր ունեն **ծնողներն ու մանկավարժները:**

### **Ընտանեկան կոնֆլիկտերի հետևանքով առաջացած հոգետրավմաների հաղթահարման ուղիներ**

**Ընտանիքի արձագանքը երեխայի հոգետրավմային:** Յուրաքանչյուր երեխա իր ուրույն ձևով է արձագանքում տրավմաներին, սակայն վերականգնվելու համար բոլորն էլ կարիք ունեն ջերմության և հոգատարության: Ծնողներն ու մտերիմները, բնականաբար, ջանում են անել առավելագույնը երեխաների բարօրության համար: Այնուամենայնիվ, երբեմն իրագեկվածության, գիտելիքների պակասի, մոտեցման ճիշտ ձևերի չիմացության պատճառով

մեծահասակները կարող են անօգուտ կամ նույնիսկ վնասակար վարքագիծ ցուցաբերել տրավմատիկ ապրումներ ունեցող երեխաների հանդեպ: Երբ ծնողը գիտի, հասկանում և վերլուծում է երեխայի դրսևորումները տրավմատիկ իրողության հակագոյանների համատեքստում, նա կարողանում է օգտակար լինել երեխային և ցուցաբերել արդյունավետ ծնողավարական հմտություններ:

Գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ, որոնք կարող են օգնել ընտանիքի անդամներին արդյունավետորեն արձագանքելու երեխայի անցանկալի վարքածեղերին: Տրավմատիկ իրողության հաղթահարման կարևոր ուղիներից մեկը երեխայի հետ լինելն է, նրա հետ զբաղվելը: Մեծահասակը չի կարող արագացնել ապափինման գործընթացը, սակայն կարող է նշանակալից դեր ունենալ դրանում: Ընդ որում՝ դրա իրականացումը բավականին դյուրին է. պահանջում է միայն ներգրավվածություն երեխայի կյանքում, ազատ, անկեղծ շփում, հեռուստատեսության, համակարգչային խաղերի և այլ խանգարող հանգամանքների բացակայություն: Լավագույն օգնությունը այնպիսի միջավայրի ստեղծման մեջ է, որտեղ երեխան ազատ կկարողանա արտահայտել իր զգացմունքները և կունենա հարցեր տալու հնարավորություն: Կարևոր է խրախուսել երեխային պատմել, խոսել այն ամենի մասին, ինչով նա անցել է կամ ինչ տեսնում է, լսում է ներկա պահին: Կարևոր է խրախուսել նրան տալ հարցեր, արտահայտել մտավախությունները: Երեխայի հետ շփման մեջ շեշտադրվում և կարևորվում է աջակցումն ու ֆաջալերումը, այլ ոչ թե՛ ստիպելը և շտապողականությունը: Նրանք կարող են անցանկալի վարք ցուցաբերել, սակայն դժվարությամբ խոսել իրենց իրական զգացմունքներից: Ուստի, ծնողը կամ ընտանիքի այլ մեծահասակ անդամը կարող է սովորեցնել հույզերի արտահայտման տարբեր ձևեր՝ նկարչություն, խաղաբլում և այլ: Չափազանց կարևոր է լինել երեխայի հետ անկեղծ: Անհրաժեշտ է տեղեկատվությունը տալ տարիքին համապատասխան ձևով ու ծավալով, անպայման չէ այն շատ վառ և գունեղ ներկայացնել, սակայն անհրաժեշտ է լինել անկեղծ և ասել միայն ճշմարտությունը: Երեխայի հետ շփման ժամանակ կարևոր է անել շատ սովորական, կենցաղային, առօրյա գործողություններ: Երեխան պետք է վստահ լինի, որ կյանքը շարունակվում է, կարելի է խաղալ, ընկերանալ, վայելել ընտանեկան երեկոները, զվարճանալ և այլն: Տրավմատիկ իրողության հաղթահարման համար խորհուրդ է տրվում կրճատել կամ նվազագույնի հասցնել տեղեկատվական և մեդիա ազդեցությունները: Տրավմատիկ իրավիճակներում հայտնված երեխաները կարող են փնտրել և տեսնել որոշակի տեղեկատվություն, որը կապված է իրենց ապրումների հետ: Մեծահասակի կողմից

չստուգված նմանատիպ լուրերը, ֆիլմերը, տեղեկատվությունը կարող են խորացնել երեխայի ապրումները և հակազդումները: Անհրաժեշտ է վերահսկել այն տեղեկատվությունը, որը ստանում է երեխան, սահմանափակել այն, հատկապես՝ ֆեյսբուք առաջ: Եթե չի հաջողվում խուսափել տեղեկատվական հոսքից, ցանկալի է, որպեսզի երեխան լսի, դիտի ծնողի հետ միասին: Այս դեպքում ծնողը կարող է երեխային տալ որոշակի բացատրություններ, նվազեցնել բացասական ազդեցության աստիճանը, բացատրել տեղեկությունը համապատասխան համա- տեքստում: Երեխայի կամ դեռահասի համար առավել անվնաս է տեղեկատվության ընթերցումը, քան՝ դիտումը: Ուստի, եթե երեխան կարիք ունի որևէ նորություն, նպատակահարմար է նրա հետ փնտրել և կարդալ համապատասխան նյութը, այլ ոչ թե՝ դիտել այն: Տրավմատիկ իրողության հետևանքների հաղթահարման կարևոր ֆայլերից մեկը երեխայի ֆիզիկական ակտիվության խթանումն է: Ֆիզիկական ակտիվությունը նպաստում է հորմոնալ համակարգի կարգավորմանը, լարվածության քուլացմանը, քնի կարգավորմանը: Անհրաժեշտ է երեխայի հետ փնտրել և գտնել իրեն հետաքրքրող սպորտաձևերը, ինչը հնարավորություն կընձեռնի շարժման մեջ դնել ողջ մարմինը և դուրս կբերի երեխայի նյարդային համակարգը տրավմային բնորոշ «սառեցված», «ֆարացած» վիճակից: Ծնողներին անհրաժեշտ է հիշել, որ երեխայի մասին ճիշտ հոգատարությունը սկսում է սեփական անձի մասին հոգատարությունից: Տրավմատիկ իրողության հաղթահարման ընթացքում ծնողներին կարևոր է խմանալ նաև, որ եթե երեխայի ախտանիշները չեն վերանում մոտակա երեք ամիսների ընթացքում, կամ ավելի սրվում են, ինտենսիվանում, խանգարում են կենսագործունեությանը, ապա անհրաժեշտ է դիմել համապատասխան մասնագետների (մանկական հոգեբան կամ հոգեթերապևտ, հոգեբույժ), որոնք կօգնեն և կաջակցեն երեխային հաղթահարելու սրված ախտանիշները:

**Մանկավարժների աջակցությունը տրավմատիկ իրադրությունն ապրած երեխային:** Ուսուցիչները և մանկավարժները, ծնողներից և մտերիմներից հետո, այն առաջնային օղակն են, որոնք կարող են անգերազնահատելի օգնություն ցուցաբերել երեխային՝ հաղթահարելու կյանքի դժվարագույն շրջանը: Գոյություն ունեն մի քանի կարևոր հմտություններ ու տեղեկատվություն, որոնք մանկավարժները կարող են օգտագործել իրենց գործունեության ընթացքում՝ նպաստելու տրավմատիկացված աշակերտի վերականգնմանը: Պետք է հիշել, որ յուրաքանչյուր երեխա յուրովի է արձագանքում տարբեր իրավիճակներին: Երեխաների արձագանքը կարող է շատ ցայտուն չլինել, բայց միևնույն է՝ նրանք կարող են շատ խորը վերապրել իրենց հետ կատարվածը: Ուստի, ընտանիքն ու մանկավարժները

պետք է չափազանց ուշադիր լինեն երեխաների հանդեպ, քանի որ տրավմատիկ իրողության ներգործությունը, չլինելով արտահայտված, կարող է տարիներ շարունակ խոցարել երեխայի արդյունավետ կենսագործունեությանը: Տրավմատիկ իրողությունը փոխում է մարդկանց մտածելակերպը, կենսագործունեության ընթացքը, ուժը: Ուստի ուսուցիչներն ու մանկավարժները պետք է հիշեն, որ աշակերտների կրթական և ուսումնական նպատակներն ու իրենց առջև դրված խնդիրները կարող են բավականաչափ փոխված լինել: Որոշ աշակերտներ կարող են լիարժեք անտարբերություն ցուցաբերել, չկենտրոնանալ, ցրված լինել, մյուսները կարող են գերակտիվ դառնալ: Ամեն դեպքում, առկա են որոշակի փոփոխություններ, ուստի ուսուցչից պահանջվում է գերակառնություն, որպեսզի նա կարողանա օգտակար լինել իր սանին:

Դրա համար շատ կարևոր է.

- Սահմանել դասերի կարճատև պլան, տալ մինիմալ տեղյակ հանձնարարություններ, թեթևացել երեխայի ծանրաբեռնվածությունը, ակուն դարձնել ամենօրյա գրաֆիկը:
- Տրավմա ապրած երեխաների հետ անհրաժեշտ է կիրառել ուսուցանման այնպիսի մեթոդներ, որոնք ուղղված են կենտրոնացմանը, կառուցվածքայնությանը: Կարելի է ընդգծել նյութի կարևոր կետերը, պարբերությունները, մասնատել ծավալուն նյութը և այլ նմանատիպ հնարներ:
- Կարևոր է իրագրել դասարանի այլ աշակերտներին տվյալ երեխայի կարիքների, դժվարությունների վերաբերյալ: Համագործակցել համադասարանցիների հետ տրավմա ապրած երեխայի աջակցության գործընթացում:
- Կարևոր է անկեղծ ու մտերիմ կապ պահպանել ծնողների և աշակերտի հետ՝ նրա կյանքում տեղի ունեցող բոլոր փոփոխությունների մասին տեղյակ լինելու նպատակով, ինչը կօգնի դասարանում ավելի վերահսկելի դարձնել վարքը:
- Չափազանց կարևոր է անկեղծ լինել սեփական զգացմունքների դրսևորման ժամանակ: Աշակերտները հետևում են իրենց ուսուցիչներին և կարող են սովորել նրանցից նիշտ և արդյունավետ վերականգնման հմտություններ:
- Ուշադիր լինել երեխայի ագրեսիվ, լարված վարքի հանդեպ: Նմանատիպ վարքը կարող է հետտրավմատիկ հոգեվիճակի հետևանք լինել և հաճախ ի հայտ գալ տրավման հիշեցնող իրավիճակներում: Կարևոր է, որպեսզի ուսուցիչը ժամանակ տրամադրի երեխայի հետ խոսելու, իրավիճակը ֆինարկելու համար, բացատրի երեխայի վարքը, նրա հույզերը: Եթե վարքը կրկնվող է, անվերահսկելի, լավագույն տարբերակը մասնագետին դիմելն է:



- Ուսուցիչներն ու մանկավարժները պետք է ուշադիր լինեն, որպեսզի չպիտակավորեն երեխային: Օրինակ՝ «խանգարող», «տարբերվող», «դժվար», «խեղճ» և այլ նմանատիպ բառերն ու պիտակները միմիայն կխորացնեն երեխայի ակտանիզները:
- Կարևոր է երեխաներին ներգրավել արտաուսումնական կամ դպրոցական ցանկացած միջոցառումների, հասարակական գործունեության և այլ նմանատիպ ակտիվ գործընթացների մեջ:
- Դեռահասները հաճախ կարող են ցուցաբերել հակասոցիալական և ինքնավնասող վարք: Ուստի, օգնող է, երբ ուսուցիչներից մեկը վստահելի և ընկերական հարաբերություններ է հաստատում նման աշակերտի հետ, կարողանում է օգտակար լինել դեռահասին դժվար պահերին : Մանկավարժը կարող է օգնել երեխաներին նոր հարաբերություններ կառուցելու գործընթացում, քանի որ տրամադաստիգացված երեխաները դժվար են հարմարվում նոր իրավիճակներին և վստահում ուրիշներին:

## **Եզրակացություն**

Այսպիսով, ընտանիքը հասարակական կարևորագույն սոցիալական ինստիտուտ է, որը հանդես է գալիս որպես անհատի զարգացման կարևորագույն գործոն: Վերլուծելով ընտանիքի դերը մարդու կյանքում, տեսնում ենք, որ ընտանիքն այն սոցիալական ինստիտուտն է, հասարակության այն բջիջը, որում տեղի է ունենում կյանք մտած մարդու ձեռավորում: Այն դառնում է առաջին տունը, որտեղ մարդը մեծանում է և ստանում կյանքի առաջին դասերը, որտեղ նա ստանում է աջակցություն և օգնություն, որտեղ նա սովորում է սեր աշխարհի և մարդկանց հանդեպ:

Ընտանիքում միջանձնային հարաբերությունները, յուրաքանչյուրի պահվածքը կարող է ազդել ընտանիքի դինամիկայի վրա, որի անփակտելի մասն են կազմում կոնֆլիկտները:

Կոնֆլիկտը երկու կամ ավելի մարդկանց փոխադարձ բացասական հոգեվիճակ է, որը բնութագրվում է թժնամանքով, օտարվածությամբ, հարաբերություններում բացասական վերաբերմունքով, որը պայմանավորված է նրանց հայացքների, շահերի կամ կարիքների անհամատեղելիությամբ:

Ամուսնական կոնֆլիկտները կարող են լինել **կառուցողական** կամ **կործանարար**: **Կառուցողականորեն** լուծված կոնֆլիկտները բնորոշ են բոլոր ամուսնական միություններին: Ավելին, դրանք ամուսնական հարաբերությունների անհրաժեշտ բաղադրիչն են:

**Կործանարար** կոնֆլիկտներն աննկատ չեն մնում, և ամուսիններին հոգեբանական տրավմա են պատճառում: Ուստի, ամուսնական կոնֆլիկտի մասնակիցների գործողությունները պետք է ուղղված լինեն կոնֆլիկտի բնույթը կործանարարից կառուցողականի փոխելուն: Այդ նպատակների համար կիրառվում են մի շարք մեթոդներ՝ «սոցիալական հեռավորության պահպանում», «բազմազանության կանոնի» պահպանում և «հարթեցում», «բարեգործական ուղերձների» մեթոդ:

Ամուսնական կոնֆլիկտների լուծման ուղիներից մեկը հոգեբանական խորհրդատվությունն է, որի էությունն առաջարկությունների մշակումն է, բացասական հոգեբանական գործոնները փոխելու համար, որոնք դժվարացնում են ամուսինների կյանքը և առաջացնում կոնֆլիկտներ:

Ընտանեկան կոնֆլիկտները բացասական ազդեցություն են ունենում երեխայի ներպաշտակ զարգացման և հոգեկան

առողջության վրա, քանի որ հենց ընտանիքում են ձևավորվում երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում:

Վերլուծելով նյութի բովանդակությունը՝ կարելի է գալ այն եզրակացության, որ կոնֆլիկտային ընտանիքներում ապրող երեխաներին մեծապես կարող են աջակցել ծնողներն ու ուսուցիչները: Նրանք այն առաջնային օղակն են, որոնք կարող են անգերազնահատելի օգնություն ցուցաբերել երեխային՝ հաղթահարելու կյանքի դժվարագույն շրջանը: Երբ նրանք գիտեն, հասկանում են և վերլուծում են երեխայի դրսևորումները տրավմատիկ իրողության հակագրումների համատեքստում, նրանք կարողանում են օգտակար լինել երեխային և ցուցաբերել համապատասխան հմտություններ: Ուստի՝ **ծնողները** պետք է.

- ⊙ հնարավորին չափ խուսափեն կոնֆլիկտային իրավիճակներից, հատկապես երեխաների առկայության պարագայում,
- ⊙ անխուսափելի կոնֆլիկտների դեպքում առավել ուշադիր լինեն երեխաների հուզական ներաշխարհի կայունության պահպանման և ֆիզիկական զարգացման խնդիրներին,
- ⊙ աշխատանքային լարվածության պարագայում միշտ և հնարավորինս շատ ժամանակ հատկացնեն երեխաներին,
- ⊙ միշտ պետք է հավատարիմ մնան բարեկամական տոնայնությանը,
- ⊙ անմիջապես արձագանքեն երեխայի մոտ թեկուզ չնչին բացասական վարքագծի դրսևորումներին,
- ⊙ մշակեն ներընտանեկան խնդիրները հմտորեն շրջանցելու տարբերակներ և հնարավորության դեպքում երեխային աննկատ կերպով ներգրավեն այդ գործընթացում,
- ⊙ եթե կոնֆլիկտի մասին լսել և հմտորեն շրջանցել հնարավոր չէ, ապա պետք է անպայման երեխային ասեն ճշմարտությունը և լուծումներ փնտրեն նրա հետ միասին,
- ⊙ միշտ երեխային զբաղեցնեն հետաքրքիր ժամանցով և երբեք չաղավաղել նրա մանկական

հիշողությունները,

**մանկավարժները** պետք է.

- ⊙ թեթևացեն երեխայի ծանրաբեռնվածությունը, հկուն դարձնեն ամենօրյա գրաֆիկը,
- ⊙ կիրառեն կենտրոնացման, ուշադրության զարգացմանն ուղղված մեթոդներ,
- ⊙ ուշադիր լինեն երեխայի ագրեսիվ, լարված վարքի հանդեպ,
- ⊙ երեխաներին ներգրավեն արտաուսումնական կամ դպրոցական ցանկացած միջոցառումների, հասարակական գործունեության և այլ նմանատիպ ակտիվ գործընթացների մեջ,
- ⊙ ընկերական հարաբերություններ հաստատեն նման աշակերտի հետ,
- ⊙ օգնեն նոր հարաբերությունների կառուցման գործընթացում:

Ծնող- աշակերտ- ուսուցիչ համագործակցությունը, համակողմանի, նպատակաուղղված աշխատանքը կարող է նպաստել երեխաների հոգեկան և ֆիզիկական զարգացմանը խեղաթյուրումներից խուսափելուն:

1. <https://ru.scribd.com/document/532478650/d5a8d5b6d5bfd5a1d5b6d5a5d5a1d5b6-d5afd5b8d5b6d686d5acd5abd5afd5bf-1>
2. <https://bazamakeup.ru/hy/kakim-byvaet-klimat-v-seme-i-kak-ne-poiti-po-skolzkoi.html>
3. <http://boon.am/conflicts/>
4. <https://ru.scribd.com/document/532478650/d5a8d5b6d5bfd5a1d5b6d5a5d5a1d5b6-d5afd5b8d5b6d686d5acd5abd5afd5bf-1>
5. <https://www.doctors.am/yntanekan-konfliktner>
6. <https://golostfilm.ru/hy/pests/razreshenie-konfliktnyh-situacii-v-seme-sposoby-razresheniya/>
7. <http://gspi.am/media/journal/2014n1b/24.pdf>
8. Խանամիրյան Ի. Ռ., Գևորգյան Դ. Է., Երեխան և հոգևորական. Ձեռնարկ աջակցող մեծահասակների համար, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2017  
<https://www.unicef.org/armenia/media/2011/file/%D4%B5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5%D5%BF%D6%80%D5%A1%D5%BE%D5%B4%D5%A1%D5%B6.pdf>
9. <https://www.freepapers.ru/18/semejnye-konflikty-vidy-istochniki-sledstviya/268149.1760937.list3.html>

